

Գիտության բաժնի հաշվետվություն

2006թ. ընթացքում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ԲՀՊՏ-ներում, դեկորատիվ պարկերում եւ «Ջրվեժ» անտառապարկում կատարվել են.

- «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության տարածքների բնական Էկո-համակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրություններ,
- «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության արգելոցում եւ արգելավայրերում շրջակա միջավայրի դիտանցի իրականացում:

Բուսական աշխարհի ուսումնասիրություններ

2006թ. ընթացքում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ԲՀՊՏ-ներում, դեկորատիվ պարկերում եւ «Ջրվեժ» անտառապարկում կատարվել են գենոֆոնդի եւ բնության ժառանգության գիտական ուսումնասիրություններ, մոնիտորինգ: Գույքագրում իրականացնելու նպատակով շարունակվել է հերբարիումների լրացման գործընթացը: Կատարված աշխատանքները համապատասխանել են գիտության բաժնի 2006թ. աշխատանքային ծրագրին:

«Էրեբունի» պետարգելոց

Արգելոցի ֆլորայի, բուսականության եւ բուսական ռեսուրսների դիտարկումները ցույց են տալիս, որ աճի, զարգացման, թվաքանակի բնականոն ընթացքը Էական որել է փոփոխության չի ենթարկվել: Փորձ է արվում «Ջրվեժ» անտառապարկի բնական հանդակների ֆլորան, բուսականությունն ու բուսական ռեսուրսները դիտարկել մեկ համակարգում՝ որպես «Էրեբունի» պետարգելոցին հարող (հարակից) տարածք: Վերջինս բնակլիմայական տեսակետից գտնվում է գրեթե միեւնույն պայմաններում: «Ջրվեժ» անտառապարկն օգտագործվում է նաեւ որպես տարածաշրջանի հազվադեպ, անհետացող եւ օգտակար բուսատեսակների բազմացման ու արհեստական պայմաններում աճեցման համար որպես գիտափորձարարական բազա:

«Էրեբունի» պետական արգելոցի տարածքի հողակլիմայական պայմանները խայտաբղետ են՝ կապված մակրո- եւ մեզոռելիեֆի, լանջերի կողմնադրության հետ եւ այլն: Բուսականության տեղաբաշխվածությունը հիմնականում պայմանավորված է վերը նշված էդաֆիկ գործոններով: Վայրի ցորենները եւ ընդհանրապես միամյա հացազգիների համակեցությունները տարածված են գլխավորապես այն հողահանդակներում, որտեղ հողի խոնավության ռեժիմը անմիջականորեն կախված է տեղումներից՝ այսինքն, տարածքն իր բուսականությամբ, ֆլորայով ու կենսաձեւերով արտահայտում է միջավայրի ուղղակի ազդեցությունը:

Վայրի ցորենների առավել խիտ համակեցությունների գոյացումը կախված է հողի ճմակավածության հետ. որքան ցածր է ճմակավածությունը, այնքան համատարած են զարգանում վայրի ցորենները, այծակները եւ այլն: Յուրաքանչյուր տարի, անկախ եղանակային պայմաններից բույսերը առաջացնում են հասուն սերմեր, սակայն բույսերի զարգացվածությունը, սերմնատվությունը զգալի փոփոխվում է աշնանը եւ գարնանը ընթացող եղանակային պայմաններից:

Հավաքվել են վայրի ցորենների ու այծակների սերմեր, կատարվել է ցանք ցանցավանդակում, որոնց վրա կատարվում են ֆենոլոգիական դիտումներ: Առավել հետաքրքիր տեսակների համար կատարվում է արտադրության մեջ որպես մշակաբույսեր օգտագործելու հետազոտական աշխատանքներ: Ցորենների սերմերը ունեն բարձր ծլունակություն՝ 95% եւ ավելին: Պահպանության ընթացքում (4-5 տարի) ծլունակության անկում գրեթե չի զգացվում: Սերմերը լաբորատոր պայմաններում սկսում են ծլել երկրորդ-երրորդ օրը, բուռն, համատարած ծլում են չորրորդ օրը: Սերմերը գրեթե չունեն հանգստի շրջան, դաշտային պայմաններում սկսում են ծլել բավականին ցածր ջերմաստիճանի պայմաններում: Ծլունակությունը, ծլման էներգիան ուսումնասիրվել է Ցորեն արարատյան, Յ. բեռտական եւ Աշորա վալիլովի տեսակների մոտ:

Բարդաձաղկավորներից ծլունակության փորձերը դրվել են վարդատերեփուկ մուշկային եւ կանգառի սերմերի վրա: Երկու տեսակներն էլ բազմանում են բացառապես միայն սերմերի միջոցով: Վարդատերեփուկը միամյա է, սերմերը ծլում են առանց ստրատիֆիկացիայի, կանգառը բազմամյա մոնոկարպիկ է, բազմանում է միայն գեներատիվ ճանապարհով: Նշված առանձնահատկությունները պետք է հաշվի առնել արհեստական պայմաններում բազմացնելու համար:

Ցորեն ուրարտու տեսակի ինչպես նաեւ մյուս տեսակների տարածվածության փոփոխությունը ըստ տարիների մեր կողմից վերագրվում է գլխավորապես ուշ աշնանային եւ վաղ գարնանային եղանակային պայմաններն եւ այնուամենայնիվ անհրաժեշտ է այդ երեւույթը

հետազոտել նաեւ համալիր՝ բիոգեցենոլոգիական մակարդակով, հաշվի առնել աբիոտիկ եւ բիոտիկ գործոնները:

Շարունակվում է վայրի ցորենների արմատային հյուսվածքներում եւ արմատամերձ հողում ֆիտոպարազիտ նեմատոդների ֆաունայի ուսումնասիրությունը: Համեմատության համար ներգրավվել է նաեւ մշակովի ցորեններ: Վայրի ցորենների երկու տեսակների մոտ (Ց. արարատյան եւ Ց. բեռտական) նեմատոդների ֆաունան ներկայացված է շուրջ 13 ընտանիքի 38 տեսակով, այդ թվում՝ պորտաբույծ (паразитические)՝ *Aglenchus agricola*, *Filenchus filiformis*, *Tylenchus vulgaris* եւ այլ տեսակներ: Արարատյան ցորենի արմատներում եւ արմատամերձ հողում շատ տարածված է *Pratylenchus pratensis* տեսակը: Մշակովի ցորենի մոտ նեմատոդների թիվը հասնում է 80-ի:

Շարունակվել է հերբարիումների լրացման գործընթացը, որն իրականացվել է գիտարշավների ընթացքում՝ նպատակ ունենալով ստեղծել լիարժեք հերբարիում՝ ընդգրկելով արգելոցի ու հարող տարածքների ողջ ֆլորան:

«Որդան կարմիր» պետական արգելավայր

«Որդան կարմիր» արգելավայրում բույսերի տեսակային կազմի ուսումնասիրության ու լրացման նպատակով հավաքվել, հերբարիումացվել եւ նշվել են ֆենոլոգիական ֆազաները: Ֆլորայի հիմնական մասը խոտաբույսեր են (այդ թվում՝ եւ միջատի կերաբույսերը) եւ թփեր, այդ թվում՝ հազվադեպ համարվող Շոբերի բորակաթուփը, որը ներկայումս պահպանվում է միայն արգելավայրի տարածքում: Բույսերի առանձին օջախներ վարակված են ժանգասևկով (որոշման փուլում է), որի հետեւանքով, ըստ նախնական դիտարկումների, ախտահարվում են բույսի տերեւները: Վերջիններս ձեւափոխվում են, ստանում սուկուլենտ տերեւի տեսք: Անհրաժեշտ է ճշգրիտ որոշել ժանգասևկի տեսակը, ազդեցության աստիճանը եւ անհրաժեշտության դեպքում մշակել պայքարի միջոցառումներ՝ հաշվի առնելով միջատի նորմալ կենսագործունեության ապահովումը: Անհրաժեշտ է նախաձեռնել բորակաթուփի եւ որդանախոտի բազմացման հետազոտումը արհեստական եւ բնական պայմաններում: Ըստ նախնական դիտարկումների վերջինիս բազմացումն ու տարածումը բնական պայմաններում խոչընդոտվում է, որը վտանգ է սպառնում Արարատյան Որդան կարմիր բազմացմանը:

«Զրվեժ» անտառապարկ

«Զրվեժ» անտառապարկի գոյության 30 տարիների ընթացքում ստեղծվել է արհեստական Էկոհամակարգ՝ ագրոցենոզ, իրեն բնորոշ բուսական եւ կենդանական աշխարհով: Չգալի տարածքներ են զբաղեցնում բնական Էկոհամակարգերը: Ծառաթփատեսակների հետ մեկտեղ ներմուծվել են նաեւ տարածքներին ոչ բնորոշ խոտաբույսեր: Ստեղծվել է ֆլորիստիկական հարուստ ցենոտիկական բազմազան օջախ, որի կառավարումը բնապահպանական եւ տնտեսական կարելոր խնդիր է:

Հերբարիումի հավաքի հետ մեկտեղ կատարվել է ներմուծված եւ բնական ֆլորայի, մասնավորապես՝ ծառաթփատեսակների որոշում:

Իրականացվել է բուսականության, մասնավորապես՝ նոր տնկարկների բույսերի կաչողականության եւ մոնիտորինգի աշխատանքներ: Ցածր կաչողականության պատճառը արհեստական ոռոգման հետ կապված դժվարություններն են:

Բավականին արդյունավետ են հազվադեպ, անհետացող եւ օգտակար բուսատեսակների օնտոգենեզի հետազոտումը արհեստական պայմաններում: Ի հայտ են գալիս վերերկրյա զանգվածի աճի ու զարգացման հետ կապված ցուցանիշներ, որոնք թե պահպանության եւ թե բուսաբուծության բնագավառում կարող են ունենալ գործնական նշանակություն: Ըստ մեր նախնական հետազոտության *Secale vavilovii* տեսակը կարող է օգտագործվել արհեստական մարգագետինների խոտախառնուրդում (շնորհիվ ինտենսիվ աճի ու կանաչ զանգվածի բարձր բերքատվության):

Հիմք է դրվել առավել կարելոր բուսատեսակների Էկոլոգակենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրմանը արհեստական եւ բնական պայմաններում:

Հայտնաբերվել է ՀՀ կարմիր գրքում գրանցված մի բույս, որը մինչ այժմ չէր հանդիպել՝ Խնկենի բթատերեւ (*Pistacia mutica*):

Ներմուծվել է ՀՀ կարմիր գրքում գրանցված Խնկեղեգ ճահճային (*Acorus calamus*) խոտաբույսը:

Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ

Դենդրոպարկում իրականացվել են մոնիտորինգի, հերբարիումների հավաքման եւ տեսակային կազմի որոշման աշխատանքներ:

Բերդի «Սորաններ» դենդրոպարկ

Դենդրոպարկում իրականացվել են մոնիտորինգի եւ տեսակային կազմի որոշման աշխատանքներ:

Իջեւանի դենդրոպարկ

Դենդրոպարկում իրականացվել են մոնիտորինգի, հերբարիումների հավաքման եւ տեսակային կազմի որոշման աշխատանքներ:

Կենդանական աշխարհի ուսումնասիրություններ

Ուսումնասիրությունների առարկա են եղել «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կազմում գտնվող Բերդի «Սորաններ» եւ Իջեւանի դենդրոպարկերի պոտենցիալ վնասատու միջատները: Իրականացվել են նաեւ աշխատանքներ ՊՈԱԿ-ի կազմում գտնվող ԲՀՊՏ-ների գույքագրման ցուցակների լրացման նպատակով:

Նյութը հավաքվել է վերոհիշյալ տարածքներ կայացրած գիտարշավների ընթացքում՝ հաշվետու տարվա մայիս-սեպտեմբեր ամիսներին (30 մարդ/օր ընդհանուր տեւողությամբ): Նյութի հավաքը կատարվել է ավանդական մեթոդներով: Նյութը մասամբ մշակվել է ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտում այս հիմնարկի աշխատակիցների օգնությամբ, թիթեռների որոշումը մասամբ կատարվել է Մոսկվայում եւ Տուվայում: Ընդգրկվել են նաեւ նախորդ տարիներին հավաքված տվյալները, ինչպես նաեւ բոլոր հասանելի գրական տվյալները: Վնասատուների կողմից վնասվող ծառատեսակների կազմը մասամբ որոշվել է հավաքի ընթացքում, մասամբ՝ բերված է ըստ գրական տվյալների:

Որդան կարմիրի հաշվառումը կատարվել է արգելավայրում առանձնացված փորձադաշտերում (6 փորձադաշտ Արագափի եւ 5՝ Ջրառատի տարածքներում, յուրաքանչյուրը 10 քառ.մ մակերեսով)՝ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին:

Կատարվել է նաեւ որոշ սողունների եւ երկկենցաղների հաշվառում «Էրեբունի» պետարգելոցում, «Որդան կարմիր» պետարգելավայրում եւ «Ջրվեժ» անտառապարկում: Աշխատանքը կատարվել է ավանդական մարշրուտային մեթոդով:

Մկնանման կրծողների նախնական ուսումնասիրությունը կատարվել է Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման կենտրոնի աշխատակիցների հետ համատեղ գիտարշավների ընթացքում:

Կատարված աշխատանքների հիմնական արդյունքները

- Վնասատուների գույքագրման տվյալներ (տես հավելված 1)

2006թ. «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքներում վնասատուների բռնկում չի գրանցվել, ուստի պլանով նախատեսված «Ջրվեժ» անտառապարկում եւ Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում վնասատուների հաշվառման փոխարեն կատարվել է Բերդի «Սորաններ» եւ Իջեւանի դենդրոպարկերում վնասատուների գույքագրում:

Բերդի «Սորաններ» դենդրոպարկում հայտնաբերվել են 29 տեսակի պոտենցիալ վնասատու միջատներ, այդ թվում՝ տերեւակերների 9 տեսակ, բների եւ ճյուղերի վնասատուների՝ 13, գեներատիվ մասերի (ծաղիկներ, պտուղներ) վնասատուների 4 տեսակ եւ արմատակեր վնասատուների՝ 3 տեսակ:

Իջեւանի դենդրոպարկում հայտնաբերվել են ընդհանուր առմամբ 24 տեսակի վնասատուներ, այդ թվում տերեւակերների 10 տեսակ, բների եւ ճյուղերի վնասատուների՝ 9, գեներատիվ մասերի (ծաղիկներ, պտուղներ) վնասատուների՝ 3 եւ արմատակեր վնասատուների 2 տեսակ:

Հարկ է նշել, որ աշխատանքների ընթացքում չեն գրանցվել վերոհիշյալ տեսակների քանակության բռնկումներ, սակայն բուսածածկի համար անբարենպաստ պայմաններում այսպիսի բռնկումները խիստ հնարավոր են, ուստի անհրաժեշտ է իրականացնել այս տեսակների (հատկապես տերեւակերների) քանակության վերահսկողություն:

Գույքագրման ցուցակների լրացում

2006թ. աշխատանքների արդյունքում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքներում հայտնաբերվել են եւ կենդանական աշխարհի գույքագրման ցուցակներում ընդգրկվել մի շարք բզեզներ եւ թիթեռներ, այդ թվում.

«Էրեբունի» պետական արգելոց

1. Scarites salinus
2. Nicrophorus vespilloides
3. Trachys phlyctaenoides
4. Ceutorrhynchus sophiae
5. Ceutorrhynchus assimilis
6. Sitona callosus

«Որդան կարմիր» պետական արգելավայր

1. Margarinotus cadaverinus
2. Syntomus obscuroguttatus
3. Microlesthes sp.
4. Onthophagus marginalis marmoratus
5. Copris lunaris
6. Oniticellus fulvus

«Ջրվեժ» անտառապարկում հայտնաբերվել են Բնության պահպանության միջազգային միության (IUCN) Կարմիր ցուցակում գրանցված *Propserpinus proserpina* եւ *Hyles hippophaes* իլիկաթիթեռները: Վերջինս հայտնաբերված է նաեւ Բերդի «Սորաններ» դենդրոպարկում:

Համատեղ աշխատանքների ընթացքում գույքագրվել են «Ջրվեժ» անտառապարկի եւ «Որդան կարմիր» արգելավայրի կրծողները, ինչպես նաեւ որոշ այլ մանր կաթնասուններ: Հայտնաբերվել են.

«Ջրվեժ» անտառապարկ

1. Գորշատամ սրնչակ - *Crocidura russula*
2. Պարսկական ավազամուկ - *Meriones persicus*
3. Փոքրասիական ավազամուկ - *Meriones blackleri*
4. Դաշտամուկ - *Microtus socialis*
5. Փոքր ճագարամուկ - *Allactaga elater*
6. Տնային մուկ - *Mus musculus*
7. Գորշ համստեր - *Cricetulus migratorius*
8. Գորշ առնետ - *Rattus norvegicus*
9. Աքիս - *Mustela nivalis*
10. Ականջավոր ոզնի - *Erinaceus auritus*
11. Սովորական ոզնի - *Erinaceus concolor*
12. Փորսուղ - *Meles meles*
13. Անտառային քնամուկ - *Dryomis nitedula*
14. Նապաստակ - *Lepus europaeus*
15. Միջերկրածովային չղջիկ - *Pipistrellus kuhli*
16. Սրականջ չղջիկ - *Myotis blythi*

«Որդան կարմիր» արգելավայր

1. Փոքրասիական ավազամուկ - *Meriones blackleri*
2. Փոքր ճագարամուկ - *Allactaga elater*
3. Ականջավոր ոզնի - *Erinaceus auritus*
4. Տնային մուկ - *Mus musculus*
5. Գորշ համստեր - *Cricetulus migratorius*
6. Գորշ առնետ - *Rattus norvegicus*

Վերջին 3 տեսակը սինանթրոպ են եւ տարածք են ներթափանցում մոտակա բնակավայրերից:

Որդան կարմիրի հաշվառում

Արագափի տարածքում մեկ փորձադաշտից հաշվառվել է 435-700 անհատ (միջինը՝ 620 անհատ): Այս թիվը գերազանցում է անցած տարվա տվյալներին, տեղավորվում է նախկինում հայտնաբերված բազմամյա տատանումների մեջ եւ վկայում է այս տարածքում համեմատաբար բարենպաստ պայմանների մասին:

Ջրառատի տարածքում նկատվում են գերառուտի նշաններ եւ որդան կարմիրի քանակությունը անհամեմատ ցածր է՝ կազմելով (1 փորձադաշտի հաշվարկով) 80-151 անհատ (միջինը՝ 124 անհատ): Այսպիսով միջատի քանակությունը թեեւ չնչին չափով գերազանցում է անցած տարվա տվյալները, սակայն բավականին մեծ չափով զիջում է թե Արագափի տարածքի թվերին, թե Ջրառատի տարածքի 1980-ական տվյալներին:

Սողունների եւ երկկենցաղների հաշվառում

«Էրեբունի» պետարգելոց.

Հաշվառումը կատարվել է 2 անգամ, 06.05. և 21.05. 2006թ.

Հաշվառման արդյունքներն են.

Կենդանատեսակի անվանումը	06.05.	21.05.
<i>Bufo viridis</i>	2	1
<i>Vipera lebetina</i>	1	1
<i>Coluber schmidtii</i>	1	-
<i>Eirenis collaris</i>	3	5
<i>Eirenis punctatolineata</i>	1	1
<i>Ophisops elegans</i>	2	2
<i>Mabuja aurata</i>	2	2
<i>Eomeces schneideri</i>	6	2
<i>Pseudopus apodus</i>	3	3
<i>Typhlops vermicularis</i>	4	2
<i>Eryx jaculus</i>	1	1
<i>Telescopus fallax</i>	1	-

Վերջին տեսակը տարածքում հայտնաբերվել է առաջին անգամ, գրանցված է Հայաստանի կարմիր գրքում:

«Որդան կարմիր» արգելավայր

Հաշվառումը կատարվել է 1 անգամ, 30.05.2006թ.

Հաշվառման արդյունքներն են.

Կենդանատեսակի անվանումը	30.05.
<i>Rana ridibunda</i>	5
<i>Bufo viridis</i>	3
<i>Natrix tessellata</i>	2

Նախկինում գրանցված *Coluber schmidtii* տեսակը (տես 2005թ. հաշվետվությունը) այս հաշվառման ընթացքում չի հայտնաբերվել:

«Ջրվեժ» անտառպարկ.

Հաշվառումը կատարվել է 3 անգամ, 25.04., 10.05 և 31.05.2006 թ.

Հաշվառման արդյունքներն են.

Կենդանատեսակի անվանումը	25.04.	10.05	31.05.
<i>Bufo viridis</i>	1	4	1
<i>Rana ridibunda</i>	2	5	5
<i>Hyla savignii</i>	-	1	1
<i>Vipera lebetina</i>	1	4	1
<i>Eirenis collaris</i>	3	3	4
<i>Typhlops vermicularis</i>	3	-	1
<i>Coluber schmidtii</i>	1	1	-
<i>Coluber najadum</i>	1	-	2
<i>Ophisops elegans</i>	4	3	3
<i>Laudakia caucasica</i>	-	7	5
<i>Pseudopus apodus</i>	4	4	3

Աշխատանքները կատարվել են աշխատավարձի ֆոնդի սահմաններում:

Բաժինը շարունակել է ակտիվ միջազգային համագործակցությունը: Արդեն նշվել են Տուլայի գոտեկգոտարիումի հետ գիտական համագործակցության մասին պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքները: Պրագայի ազգային թանգարանի եւ Բռնո քաղաքի թանգարանի հետ մեկտեղ անցկացվող միջատաբանական հետազոտությունների ընթացքում ուսումնասիրվել են ոսկեբզեզների (*Buprestidae*) (այդ թվում նաեւ Էկզոտիկ) կարգաբանությունը եւ մորֆոլոգիան: Հարավ-արեւելյան Ասիայի եւ Պալեարկտիկայի նյութերից նկարագրված է գիտության համար նոր ոսկեբզեզների 1 ենթացեղ, ինչպես նաեւ 15 նոր տեսակ *Endelus* եւ *Sphenoptera* ցեղերից: Բաժնի աշխատակիցները մասնակցել են ՀՀ Կենսաբազմազանության 3-րդ Ազգային զեկույցի պատրաստման, ինչպես նաեւ «Սեւան» ու «Դիլիջան» ազգային պարկերի մոնիտորինգի պլանների մշակման աշխատանքներին:

Հաշվետու ժամանակաշրջանում բաժնի աշխատակիցները հրատարակել եւ տպագրության են հանձնել 16 աշխատանք (տես հավելված 2):

Պատրաստվել եւ տեղադրվել է «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ինտերնետային կայքը (www.reservepark.mnp.am):

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքների վնասատու միջատների գույքագրման տվյալներ

Իջեանի դենդրոպարկ

№	Լատիներեն անունը	Հայերեն անունը	Վնասվող ծառատեսակները
Տերեւակեր վնասատուներ			
1.	Tischeria comlanella	կաղնու միագույն ցեց	կաղնի
2.	Tortrix viridana	կաղնու կանաչ տերեւուլոր	կաղնի
3.	Euproctis chrysorrhoea	ոսկետուտ	կաղնի, պտղատուներ, ծփի, բոխի, թխկի, լորենի
4.	Aporia crataegi	ալոճաթիթեռ	պտղատուներ
5.	Phalera bucephalia	արծաթափայլ լուսնիկ	լորենի, ծփի, ուռիներ, կաղնի, հաճարենի, բարդիներ
6.	Operophtera brumata	ձմեռային երկրաչափ	կաղնի, բոխի, այլ թեղազգիներ, պտղատուներ
7.	Erannis defoliaria	տերեւվազրկող երկրաչափ	կաղնի, թխկի, բոխի, այլ թեղազգիներ, ուռիներ, բարդիներ, հացենի, պտղատուներ
8.	Malacosoma neustria	օղակավոր բոժոժագործ	կաղնի, բոխի, մասուր, պտղատուներ
9.	Euproctis chrysorrhoea	ոսկետուտ	կաղնի, պտղատուներ, ծփի, բոխի, թխկի, լորենի.
10.	Ocneria dispar L.	տարագույգ մետաքսագործ	կաղնի, բոխի, բարդիներ, պտղատուներ, փշատերեւներ
Քների եւ ճյուղերի վնասատուներ			
11.	Agilus angustulus Ill.	կաղնու երկարամարմին ոսկերեզեզ	կաղնի
12.	Anthaxia quadriguttata	քառաբիծ ոսկերեզեզ	փշատերեւներ
13.	Anthaxia nigrojubata	սեւահեր ոսկերեզեզ	փշատերեւներ
14.	Plagionotus arcuatus L.	կաղնու խայտաբղետ երկարաբեղիկ	կաղնի, հաճարենի, բոխի
15.	Pissodes notatus L.	սոճու փոքր երկարակնճիթ	սոճի
16.	Blastophagus piniperda	անտառային մեծ պարտիզպան	սոճի
17.	Blastophagus minor Hart	անտառային փոքր պարտիզպան	սոճի
18.	Scolytus scolytus L.	քայքայիչ կեղեւակեր	թեղազգիներ
19.	Hylesinus fraxini Panz.	հացի կեղեւակեր	հացենի
Գեներատիվ մասերի (ծաղիկներ, պտուղներ) վնասատուներ			
20.	Curculio glandium Marsh.	կաղնու երկարակնճիթ	կաղնի
21.	Cetonia aurata	Ոսկյա բրոնզաբզեզ	ծաղիկներ բազմակեր վնասատու
22.	Oxythyrea cinctella	բծավոր բրոնզաբզեզ	ծաղիկներ բազմակեր վնասատու
Արմատակեր վնասատուներ (հատկապես տնկարաններում)			
23.	Melolontha pectoralis	կովկասյան մայիսյան բնդեռ	բազմակեր
24.	Amphimallon solstitialis	հունիսյան բնդեռ	բազմակեր

Քերդի «Սորաններ» դեղորայք

№	Լատիներեն անունը	Հայերեն անունը	Վնասվող ծառատեսակները
Տերեւակեր վնասատուներ			
1.	<i>Cacoecia rosana</i>	վարդի տերեւուլոր	կաղնի, թեղազգիներ, մասուր, պտղատուներ
2.	<i>Tortrix viridana</i>	կաղնու կանաչ տերեւուլոր	կաղնի
3.	<i>Euproctis chrysorrhoea</i>	ոսկետուտ	ոսկետուտ կաղնի, պտղատուներ, ծփի, բոխի, թխկի, լորենի
4.	<i>Aporia crataegi</i>	ալոճաթիթեռ	պտղատուներ
5.	<i>Phalera bucephalia</i>	արծաթափայլ լուսնիկ	լորենի, ծփի, ուռիներ, կաղնի, հաճարենի, բարդիներ
6.	<i>Erannis defoliaria</i>	տերեւազրկող երկրաչափ	կաղնի, թխկի, բոխի, այլ թեղազգիներ, ուռիներ, բարդիներ, հացենի, պտղատուներ
7.	<i>Malacosoma neustria</i>	օղակավոր բոժոժագործ	կաղնի, բոխի, մասուր, պտղատուներ
8.	<i>Euproctis chrysorrhoea</i>	ոսկետուտ	կաղնի, պտղատուներ, ծփի, բոխի, թխկի, լորենի.
9.	<i>Ocneria dispar</i> L.	տարազույգ մետաքսագործ	կաղնի, բոխի, բարդիներ, պտղատուներ, փշատերեւներ
Քերդի եւ ճյուղերի վնասատուներ			
10.	<i>Evetria buoliana</i> Schiff.	սոճու շիվապատատ	սոճի
11.	<i>Melanophila decastigma</i>	բարդու փոքր ոսկերգեզ	բարդիներ
12.	<i>Capnodis miliartis</i>	բարդու մեծ ոսկերգեզ	բարդիներ
13.	<i>Agrilus angustulus</i> Ill.	կաղնու երկարամարմին ոսկերգեզ	կաղնի
14.	<i>Agrilus biguttatus</i> F.	երկբիծ երկարամարմին ոսկերգեզ	կաղնի
15.	<i>Agrilus lineola</i> Redt.	բարդու երկարամարմին ոսկերգեզ	բարդի, երբեմն՝ ուռիներ
16.	<i>Pissodes notatus</i> L.	սոճու փոքր երկարակնճիթ	սոճի
17.	<i>Blastophagus minor</i> Hart	անտառային փոքր պարտիզպան	սոճի
18.	<i>Ips acuminatus</i> Gyll.	գագաթնային կեղեւակեր	սոճի
19.	<i>Ips sexdentatus</i> Boern.	վեցատամ կեղեւակեր	սոճի
20.	<i>Scolytus laevis</i> Chap.	փայլուն կեղեւակեր	թեղազգիներ
21.	<i>Scolytus scolytus</i> L.	քայքայիչ կեղեւակեր	թեղազգիներ
22.	<i>Aradus cinnamomeus</i> Pz.	սոճու կեղեւատակի մլուկ	սոճի
Գներատիվ մասերի (ծաղիկներ, պտուղներ) վնասատուներ			
23.	<i>Curculio glandium</i> Marsh.	կաղնու երկարակնճիթ	կաղնի
24.	<i>Cetonia aurata</i>	Ոսկյա բրոնզաբզեզ	ծաղիկներ բազմակեր վնասատու
25.	<i>Netocia caucasica</i>	Կովկասյան բրոնզաբզեզ	ծաղիկներ բազմակեր վնասատու
26.	<i>Oxythyrea funest</i>	Սեւ բրոնզաբզեզ	ծաղիկներ բազմակեր վնասատու
Արմատակեր վնասատուներ (հատկապես տնկարաններում)			
27.	<i>Melolontha pectoralis</i>	կովկասյան մայիսյան բնդեռ	բազմակեր
28.	<i>Polyphylla olivieri</i>	կովկասյան մարմարյա բնդեռ	բազմակեր
29.	<i>Rhisotrogus aestivus</i>		բազմակեր

Հաշվետու ժամանակահատվածում հրատարակված եւ տպագրությանը հանձնած գիտական աշխատանքների ցանկը

1. Վ. Ե. Ոսկանյան: «Էրեբունի» պետարգելոցի եւ հարակից տարածքների հացազգիների ռեսուրսները: «Ագրոգիտություն», Երեւան, 2006թ. 3-4, էջ 137-140:
2. Д. Д. Карапетян, Р. С. Мкртчян, В. Е. Восканян: Фауна паразитических нематод дикой и культурной пшеницы в Армении. Материалы международной научной конференции. Москва, 2006г., с. 130-131.
3. Վ. Ե. Ոսկանյան, Ա. Ա. Ավալյան, Ս. Գ. Երիցյան, Ա. Ս. Հարությունյան: «Էրեբունի» պետարգելոցի եւ հարող տարածքների բուսական ռեսուրսները (Աստղածաղկազգիների ընտանիք): Տեղեկատվական տեխնոլոգիաներ եւ կառավարում, № 4-3, Երեւան, 2006թ. էջ 83-89:
4. Վ. Ե. Ոսկանյան, Ա. Ա. Ավալյան, Ս. Գ. Երիցյան, Ա. Ս. Հարությունյան: «Էրեբունի» պետարգելոցի եւ «Ջրվեժ» անտառապարկի լորագգիների ռեսուրսները (Ներկայացված է տպագրության):
5. Բալաշյան Ս. Միջատների պահպանության հիմնախնդիրները: Հայաստանի կենսաբազմազանություն - 3րդ Ազգային գեկուլյցի կոնֆերանս, Երեւան, 2006թ. էջ 39-43:
6. [Collective of authors, 2006] Biodiversity of Armenia. Third National Report. - Yerevan, 2006.
7. Kalashian M. Yu., Volkovitsh M.G., M., Niehuis M. Taxonomic notes on some Palaearctic species of *Sphenoptera* from subgenus *Chilostetha* (Coleoptera: Buprestidae). Zoosystematica Rossica, 14 (1), 2006: 77-86.
8. Kalashian M. Yu., Volkovitsh M.G., M., Niehuis M. Taxonomic notes on some Palaearctic species of *Sphenoptera* from subgenera *Deudora* and *Sphenoptera* s.str. (part) (Coleoptera: Buprestidae). Zoosystematica Rossica, 14 (1), 2006: 87-100.
9. Kuban V., Kalashian M. Yu. Tribe Aphanisticini - in: Catalogue of Palaearctic Coleoptera, V.3, Apollo Books, 2006: 60-63.
10. Volkovitsh M.G., Kalashian M. Yu. Tribe Sphenopterini - in: Catalogue of Palaearctic Coleoptera, V.3, Apollo Books, 2006: 53-56; 352-369.
11. Калашян М.Ю., Волкович М. Г. Два новых вида златок рода *Sphenoptera* Dejean (Coleoptera, Buprestidae) из Таджикистана и Ирана. - Труды Русского энтомологического общества, 2006, 77: 132-136.
12. Караган Г.А., Калашян М.Ю. Морфологические особенности внутренней репродуктивной системы самцов жуков-златок (Coleoptera, Buprestidae). - Евроаз. энтомологический журнал, 5(1), 2006: 47-52.
13. Калашян М.Ю. Новые виды рода *Endelus* Deyrolle (Coleoptera, Buprestidae) из Китая, Индии и Лаоса. Энтномол. обозрение (в печ.).
14. Калашян М.Ю., Волкович М. Г. Новые виды рода *Sphenoptera* Dejean (Coleoptera, Buprestidae) из Западной Палеарктики. Кавказский энтомологический бюллетень (в печ.).
15. Караган Г.А., Калашян М.Ю. Морфологические особенности внутренней репродуктивной системы самок жуков-златок (Coleoptera, Buprestidae). Евроаз. энтомологический журнал (в печ.).
16. Kalashian M. Yu., Sakalian V. P. A review of the genus *Sphenoptera* Dejean, 1833 (Coleoptera: Buprestidae) of Balkan Peninsula. (in press).